

# TELCELL

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի  
2025 թ. 4-րդ  
եռամսյակի  
հաշվետվություն

# Բովանդակություն

■ <u>Կառավարման մարմինների միջանկյալ գեկույց</u>	
■ <u>Կորպորատիվ իրադարձություններ</u>	<u>3</u>
■ <u>Տերմինալային ցանցի զարգացում</u>	<u>4</u>
■ <u>Բջջային հավելվածի զարգացում</u>	<u>6</u>
■ <u>Կադրային քաղաքականությունը</u>	<u>10</u>
■ <u>Ֆինանսական վերլուծություն</u>	<u>12</u>
■ <u>Ռիսկեր և անորոշություններ</u>	<u>17</u>
■ <u>Ռազմավարությունը և զարգացման միտումները</u>	<u>18</u>
■ <u>ՏՀՄՍ հաշվետվություն</u>	<u>20</u>
■ <u>Պատասխանատու անձանց հայտարարությունը</u>	<u>26</u>

# Կարևոր իրադարձությունների Նկարագիր

## 1. Կորպորատիվ իրադարձություններ

### Նոր վարչակազմակերպական կառուցվածքը գործարկելու մասին

2025 թվականի 4-րդ եռամսյակում «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն ձեռնամուխ է եղել կառավարման համակարգի արդիականացմանը: Ընկերության խորհրդի 26.09.2025թ. թիվ 260925 որոշմամբ հաստատվել է նոր վարչակազմակերպական կառուցվածքը, որն ուժի մեջ է մտել 2025 թվականի դեկտեմբերի 1-ից: Փոփոխությունների առանցքային նպատակն է կառավարման օղակների օպտիմալացումը, գործառնական արդյունավետության բարձրացումը և Ընկերության կառուցվածքը շուկայական արդի իրողություններին համապատասխանեցնելը:

#### 1. Ֆինանսական և հաշվապահական գործառույթների կենտրոնացում.

- Ֆինանսական դեպարտամենտը և դրա կազմում գործող բաժինները կընդառվել են:
- Ձևավորվել է միասնական Հաշվապահական հաշվառման և ֆինանսական դեպարտամենտ:
- Նոր դեպարտամենտի կազմում ստեղծվել է Բյուջետավորման և ֆինանսական վերլուծության բաժին, ինչը թույլ կտա ավելի արդյունավետ իրականացնել պլանավորման և վերլուծական գործառույթները:

#### 2. Տեքմիսալային բիզնեսի ուղղության օպտիմալացում

- Կրճատել Տեքմիսալային բիզնեսի վարչությունը՝ որպես միջանկյալ կառավարման օղակ:
- Տեքմիսալների ցանցի զարգացման և Օպերատորների ներգրավման և սպասարկման բաժինները պահպանել որպես ինքնուրույն միավորներ:

Բաժինների անմիջական համակարգումը վերապահել Գլխավոր տնօրենի տեղակալին:

## 2. Տերմինալային ցանցի զարգացում

2025 թվականի չորրորդ եռամսյակում Ընկերությունը շարունակել է ներդնել նորարարական լուծումներ և զարգացնել իր ծառայությունները՝ նպատակ ունենալով բարձրացնել օգտատերերի թիվը, ապահովել տեխնոլոգիական առաջընթաց և ընդլայնել մատուցվող ծառայությունների շրջանակը:

### Շարունակական բարելավում.

2025 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում Telcell վճարային համակարգին միացվել են ավելի քան 28 նոր ծառայություններ մատուցողներ, որոնց օգտին հնարավոր է վճարումներ կատարել Տերմինալների միջոցով: Դա զգալիորեն ընդլայնել է Telcell համակարգում հասանելի ծառայությունների շրջանակը: Նոր ծառայությունների միջոցով կատարված գործարքների թիվը եռամսյակի ընթացքում կազմում է շուրջ 63,826 վճարում՝ շուրջ 574,099,864 ՀՀ դրամի չափով:

Ժամանակահատվածի հիմնական ռազմավարական հենքերից մեկը եղել է Տերմինալային ցանցի օպտիմալացումը՝ ըստ եկամտաբերության:


2025 թվականի վերջին եռամսյակի ընթացքում Telcell ընկերության տերմինալների ցանցի զարգացման բաժինը իրականացրել է մի շարք օպտիմալացման աշխատանքներ՝ ուղղված ցանցի արդյունավետության բարձրացմանը, սպասարկման որակի բարելավմանը և ծախսերի նվազեցմանը:

Կատարվել է տերմինալների տեղակայման վերանայում՝ հիմնված օգտագործման ինտենսիվության և հաճախորդների հոսքերի վերլուծության վրա, որի արդյունքում օպտիմալացվել է տերմինալների աշխարհագրական բաշխումը: Այսինքն՝ տերմինալները հանվել են այն վայրերից, որտեղ դրանց շահագործումը առաջացնում էր ավելի մեծ ծախսեր, քան օգուտ: Վերջին եռամսյակի ընթացքում կատարվել է ավելի քան 230 տերմինալների տեղափոխություն: Միաժամանակ իրականացվել են տեխնիկական արդիականացումներ, որոնք նպաստել են տերմինալների կայուն աշխատանքի ապահովմանը և խափանումների քանակի նվազեցմանը:

## Գործընկերային ցանցի ընդլայնում

### ■ Տերմինալային բիզնեսի զարգացումը.

1. Ընդհանուր 4897 տերմինալ,
2. չորրորդ եռամսյակի ընթացքում ավելացել է 148 տերմինալ,
3. գյուղերում տեղադրված տերմինալների քանակը՝ 1198,
4. մարզերում տեղաբաշխված է Ընկերության տերմինալային ցանցի 54%-ը:



### 3. Բջջային հավելվածի զարգացում

#### Օգտատերերի Բազա.

- Նոր նույնականացված հաճախորդներ՝ 19,089:
- Telcell Wallet-ի միջոցով բացված բանկային հաշիվների/քարտերի ընդհանուր թիվը եռամսյակում.
  - բացվել է մոտ 12,000 բանկային հաշիվ,
  - թողարկվել է մոտ 83,500 Visa թվային քարտ:
- Նոր մերջանտների և էլեկտրոնային առևտրի գործընկերների թիվն ավելացել է 68-ով: Նրանք ներկայացնում են տարբեր ոլորտներ՝ Horeca, Առողջություն, Գեղեցկություն, էլեկտրոնիկա, Ծառայություններ, Տուն և այգի, Սուպերմարկետներ:

#### Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) հետ համագործակցությունը

*Ընկերությունը շարունակում է ընդլայնել իր գործընկերների ցանցը՝ աջակցելով փոքր ու միջին բիզնեսներին և իրենց մատուցած ծառայությունների դիմաց վճարումներն ընդունելով Telcell վճարային համակարգի միջոցով՝ թե՛ օֆլայն, թե՛ օնլայն տիրույթներում:*

#### Telcell համակարգերի միջոցով վճարումներ իրականացնող ՓՄՁ-ներ.

- **էլեկտրոնային փողով վճարումներ QR գործիքով:** Ավելի քան 4500 ՓՄՁ:
- **E-Commerce հարթակներում էլեկտրոնային փողով վճարումներ** (Կայք/հավելված): Ավելի քան 600 օնլայն հարթակով ծառայություն մատուցող ՓՄՁ:
- **Telcell համակարգով** (Telcell Wallet-ում) վճարումների ընդունում: Ավելի քան 700 ծառայությունների համար:
- **PartPay (BNPL).** Ծուրջ 891 գործընկեր իրենց վաճառակետերում, առցանց հարթակներում առաջարկում են «Գնի՛ր հիմա, վճարի՛ր հետո» ձևաչափով վճարման հնարավորություն: Վերջիններս իրենց վաճառակետերում ներդրել են Telcell Wallet-ի վճարային գործիքները, ինչը հաճախորդներին հնարավորություն է տալիս կատարել գնումներ՝ վճարումը **բաժանելով մասերի** (Ընկերության գործընկեր վարկային կազմակերպության միջոցով ապառիկ վարկավորմամբ):
- **Power Bank կայաններ.** գործում է 444 տեղադրված կայան, որոնցից օգտվելու վճարումներն իրականացվում են բացառապես Telcell Wallet-ի միջոցով:

## Հաշվետու ժամանակահատվածում Telcell համակարգերին միացած նոր ծառայություններ մատուցողների քանակը:

- **Էլեկտրոնային փողով վճարումներ QR գործիքով.** Ցանցն ընդլայնվել է 24 նոր ՓՄՁ-ներով, որոնք ներդրել են Էլեկտրոնային փողով անհպում վճարումների QR գործիքակազմը:
- **E-Commerce հարթակներում Էլեկտրոնային փողով վճարումներ** (Կայք/հավելված). 7 նոր օնլայն հարթակներ (կայքեր և հավելվածներ) ինտեգրել են Telcell վճարային լուծումները՝ ապահովելով թվային գործարքների հասանելիություն իրենց հաճախորդների համար:
- **Telcell համակարգով** (Telcell Wallet-ում). Հավելվածի միջոցով վճարումների ընդունման համակարգին են միացել շուրջ 20 նոր ծառայություն մատուցողներ:
- **Power Bank կայաններ.** Հաշվետու ժամանակահատվածում տեղադրվել է 33 նոր կայան, որոնց օգտին վճարումներն ընդունվում են Telcell Wallet-ով:
- **PartPay (BNPL).** Ընդլայնվել է **PartPay ծառայության** ձևաչափով համագործակցող գործընկերների ցանկը՝ համալրվելով 37 նոր ծառայություն մատուցողներով:

### Մարզային ծածկույթ.

Telcell-ը շարունակում է ակտիվ աշխատանքները մարզային ՓՄՁ-ների ներգրավման ուղղությամբ: Հաշվետու ժամանակահատվածում Երևանից դուրս գտնվող տարածքներում նոր միացած ծառայություն մատուցողների տեսակարար կշիռը կազմել է.

- **Էլեկտրոնային փողով վճարումներ QR գործիքով:** 8 նոր ՓՄՁ:
- **Power Bank կայաններ:** 33 նոր տեղադրված կայան:
- **PartPay (BNPL).** 9 նոր գործընկեր մարզերում սկսել են կիրառել PartPay (BNPL) ծառայությունը՝ հնարավորություն տալով տեղի բնակիչներին օգտվել մաս-մաս վճարման գործիքակազմից:

### Օգտատերերի անձ

Հաշվետու ժամանակահատվածում, ակտիվ օգտատերերի թիվը միջինում կազմել է 213,000 օգտատեր:

## **Կատարվել է TCW-ի հաշվեկշռի օրական և ամսական սահմանաչափերի բարձրացում.**

- Օրական կտրվածքով սահմանվել է 5 մլն ՀՀ դրամ,
- ամսական կտրվածքով՝ 20 մլն ՀՀ դրամ:

## **Տրանսպորտային համակարգի շրջանակներում Telcell Wallet հավելվածի և Տերմինալի միջոցով օգտագործման առավել հարմար տարբերակների ներդրում.**

- Ավելացվել է տրանսպորտային քարտի մնացորդի ստուգման հնարավորություն,
- ավելացվել է տրանսպորտային քարտի համարի սկզբնական նիշերը (9374-0010) այսուհետ լրացվում են ավտոմատ կերպով,
- Տերմինալով գնված բոլոր տեսակի ուղետոմսերն այժմ հնարավոր է ստանալ և պահպանել անմիջապես Telcell Wallet թվային դրամապանակում:

## **Cash Out` բիզնեսի նոր ուղղության ծրագրային գործարկում**

Հաշվետու ժամանակահատվածում Ընկերությունն ավարտել է Cash Out նոր ծառայության ծրագրային մշակումը և իրականացրել համակարգի ակտիվ թեստավորման փուլ: Նորարարական այս ուղղության պաշտոնական գործարկումն ու ներդրումը իրական միջավայրում նախատեսված է 2026 թվականի առաջին եռամսյակում:

## **'Ծառայությունների մատուցման նոր սակագնային քաղաքականության մշակում**

Հաշվետու ժամանակահատվածում ամբողջությամբ մշակվել և հաստատվել է ծառայությունների մատուցման նոր սակագնային քաղաքականությունը: Այն ուղղված է գործընկերների համար առավել ճկուն և մրցունակ պայմանների ապահովմանը: Քաղաքականության պաշտոնական թողարկումը և գործնական կիրառումը մեկնարկելու է 2026 թվականի առաջին եռամսյակում:

## Անկանխիկ վճարումների ընդլայնում տերմինալային ցանցում

Ընկերության տերմինալային ցանցում (POS տերմինալներով հագեցած սարքավորումներում) ներդրվել է ֆինանսական և բանկային պրոդուկտների դիմաց անկանխիկ վճարման հնարավորություն: Այսուհետ հաճախորդները կարող են բանկային քարտերի միջոցով (POS տերմինալի օգնությամբ) կատարել համապատասխան վճարումները անմիջապես տերմինալներից, ինչը բարձրացնում է ֆինանսական ծառայությունների հասանելիությունը և նպաստում անկանխիկ գործառնությունների ծավալի աճին:

## Ծառայությունների խթանման ակցիաներ

### I. «Visa x 3 Ուղետոմս» արշավ

Telcell VISA թվային քարտերի օգտագործումը խթանելու նպատակով 28.10.2025 թվականից մինչև 20.12.2025 թվականը ներառյալ իրականացվել է ներգրավման արշավ՝ հետևյալ պայմաններով. Արշավի մասնակից են դառնում այն օգտատերերը, ովքեր արշավի ժամանակահատվածում **առաջին անգամ** դիմում և ստանում են Telcell VISA թվային քարտ: Յուրաքանչյուր նոր քարտապանի տրամադրվում էր **երևանի հասարակական տրանսպորտի 3 մեկանգամյա ուղետոմս:**

### II. «Շատ նվերներ քո Telcell Wallet-ում» գովազդային վիճակախաղ

Արշավն ուղղված էր Telcell Wallet-ի էկոհամակարգի ծառայությունների (VISA քարտեր, տրանսպորտային տոմսեր, QR վճարումներ, վարկեր և այլն) համապարփակ օգտագործման խթանմանը: Մասնակցության համար օգտատերերը պետք է 01.11.2025 - 25.12.2025թթ. ժամանակահատվածում կատարեին պարտադիր գործողություններ (BON-ի փոխանակում, տրանսպորտի տոմսի գնում, VISA քարտի հայտ) և հավաքեին խաղարկության կտրոններ՝ ըստ իրականացված տրանզակցիաների տեսակի և ծավալի: Արշավի արդյունքում ապահովվել է հավելվածի բոլոր առանցքային ֆունկցիոնալների օգտագործման և թողարկված VISA քարտերի քանակի զգալի աճ: Պատահական ընտրության սկզբունքով խաղարկվել է **12 արժեքավոր մրցանակ**, գլխավոր մրցանակը՝ 2 ուղևորությունն ղեպի Աբու Դաբի:

### III. «Հաջողակ փոխանցում» գովազդային վիճակախաղ

Արշավն իրականացվել է T-Bank-ից ղեպի Telcell Wallet միջազգային դրամական փոխանցումների ծավալի մեծացման նպատակով: 01.11 - 15.12 ժամանակահատվածում օգտատերերը ստացած յուրաքանչյուր 5000 ՀՀ դրամի դիմաց ավտոմատ ստացել են խաղարկության 1 կտրոն: Խաղարկվել է 3 հատ iPhone 17 Pro Cosmic Orange սմարթֆոն: Արշավն ապահովել է ղեպի Հայաստան կատարվող տրանսֆերների հոսքի աճ և Telcell Wallet-ի՝ որպես փոխանցումների ստացման առաջնային հարթակի դիրքավորումը:

## 4. Ընկերության կադրային քաղաքականությունը

Ընկերության կորպորատիվ կառավարման համակարգի կատարելագործման շրջանակում առաջնային տեղ է հատկացվում արդյունավետ կադրային քաղաքականության վարմանը: Այն ուղղված է անձնակազմի կառավարման արդյունավետ համակարգի ստեղծմանը, որն ապահովում է Ընկերության ռազմավարական նպատակների իրագործումը:

Կադրային քաղաքականությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

- Արդարություն և հավասար հնարավորություններ. աշխատակիցները պետք է ունենան հավասար իրավունքներ ու հնարավորություններ՝ անկախ սեռից, ազգությունից, կրոնից կամ այլ անհատական հատկանիշներից:
- Մասնագիտական զարգացում. ստեղծվում են պայմաններ շարունակական ուսուցման և կարիերայի առաջխաղացման համար:
- Թափանցիկություն և բաց գործընթացներ. կադրային քաղաքականությունն իրականացվում է պարզ ու կանխատեսելի մեխանիզմներով:
- Մոտիվացիայի և վարձատրության արդար համակարգ. վարձատրությունն ու խրախուսման մեխանիզմները համահունչ են աշխատակցի ներդրմանը և ցույց տված արդյունքներին:
- Բարենպաստ աշխատանքային միջավայր. խթանվում է թիմային աշխատանքը, վստահության և փոխադարձ հարգանքի մշակույթը:


Սույն հաշվետվությունն ամփոփում է 2025 թվականի չորրորդ եռամսյակում Ընկերության աշխատակազմի կառուցվածքի, շարժի և մասնագիտական զարգացման վերաբերյալ հիմնական տվյալները:

## Աշխատակազմի կառավարումը և մասնագիտական զարգացումը շարունակել են մնալ ընկերության կարևորագույն ուղղություններից մեկը

- Աշխատակիցների ընդհանուր թիվը.
  - 2025 թ.-ի դեկտեմբերի 25-ի դրությամբ՝ 376
- Աշխատակազմի համալրում.
  - Չորրորդ եռամսյակում ընդունվել է 19 նոր աշխատակից:
- Թվային և տեխնիկական աշխատակիցների քանակը՝ նոր կամ վերապատրաստված.
  - Դեկտեմբերի 25-ի դրությամբ՝ 6

## Գեներային կազմ և հավասարություն

- Ընդհանուր կազմ.
  - 46,5 % կանայք և 53,5 % տղամարդիկ
- Կանայք ղեկավար և տեխնիկական պաշտոններում.
  - 23%



## Մասնագիտական զարգացում և վերապատրաստումներ

Հաշվետու ժամանակահատվածում ընկերությունը շարունակել է ներդրումներ կատարել մարդկային կապիտալի զարգացման գործում: Մասնագիտական որակավորման բարձրացման դասընթացներին և վերապատրաստումներին մասնակցել են ընկերության 4 առանցքային մասնագետներ՝ հետևյալ ուղղություններով.

- **Թվայնացում և իրավական համապատասխանություն (2 մասնակից):** Վերապատրաստում՝ ուղղված աշխատանքային պայմանագրերի կնքման էլեկտրոնային թվային համակարգերի ներդրմանը և արդյունավետ կիրառմանը:
- **Կիբեռանվտանգություն (2 մասնակից):** Մասնակցություն «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի (UFAR) կողմից կազմակերպված մասնագիտացված դասընթացին՝ ուղղված տեղեկատվական անվտանգության համակարգերի հզորացմանը:

# Ֆինանսական վերլուծություն և էական փոփոխություններ

## Հիմնական ցուցանիշներ

### Ֆինանսական կայունություն և օպտիմիզացիա

2025 թվականի ռազմավարությանը համահունչ՝ Ընկերությունը շարունակում է իրականացնել օպտիմիզացիոն գործընթացներ՝ ուղղված շահութաբերության բարձրացմանն ու ռեսուրսների առավել արդյունավետ կառավարմանը: Վերոնշյալին զուգընթաց Ընկերությունը ակտիվորեն շարունակում է զարգացնել նոր ուղղություններ՝ թե՛ տերմինալային և թե՛ բջջային հավելվածի հարթակներում:

Ընկերության հատկանշական ցուցանիշներից է երրորդ եռամսյակում տերմինալային բիզնեսի զարգացումը: Համաձայն ՀՀ ԿԲ վիճակագրական վերջին ցուցանիշների՝ Վճարային կազմակերպությունների տերմինալների քանակը հասել է 10,799 հատի, որոնցից 54%՝ մարզերում: 4-րդ եռամսյակում Ընկերությունը տերմինալային ցանցը ավելացրել է 148 հատով (տես՝ էջ 5): Տերմինալների ուղորտում աճը ավելի մի փոքր ավելի արագ է գնացել: Ընկերությունը ավելի գրագետ հաշվարկելով ցանցի տոպոլոգիան՝ ավելի զսպված և նպատակային է իրականացրել ընդլայնման գործընթացը: Ընկերությունը զբաղեցնում է տերմինալային շուկայի գրեթե 45%, որից 54%՝ ՀՀ մարզերում: 4-րդ եռամսյակում Ընկերության Էկոհամակարգով շրջանառության աճը կազմել է ևս 5.2% կամ 13 մլրդ դրամ: Հատկանշական է, որ Ընկերության սեփական ցանցի շրջանառությունը աճել է 8.8%ով:

### Ընկերության զարգացման այլ ուղղությունները

Ընկերությունը շարունակում է զարգացնել թե՛ քանակային ցուցանիշները և թե՛ ծավալային՝ այդ թվում նաև օպերատորական ցանցի ընդլայնման հաշվին:

Համագործակցելով նոր գործընկերների հետ՝ թե՛ տերմինալներով և թե՛ բջջային հավելվածով, 4-րդ եռամսյակում Ընկերությունը լրացուցիչ 173 մլն-ից ավել շրջանառություն է ունեցել 32 նոր գործընկերների հետ, որն իր հերթին աճի միտում կունենա հաջորդ ամիսներին:

Բացառելով Տրանսպորտային համակարգի վճարումների քանակը՝ Ընկերությունն այլ օպերատորների հետ համագործակցության շրջանակներում 4րդ եռամսյակի ընթացքում նաև գործարքների քանակով է նոր մակարդակ գրանցել: Միայն դեկտեմբերին Ընկերության Էկոհամակարգով կատարվել է ավելի քան 6.3 մլն գործարք:

## Եկամուտների և ծախսերի վերլուծություն

Հասույթը չորրորդ եռամսյակում կազմել է 2,7 մլրդ դրամ, ինչը 175 մլն-ով (6.7%) ավել է երրորդ եռամսյակի համեմատ: Այլ ուղղություններով եկամուտը նույնպես աճել է՝ ապահովելով 4-րդ եռամսյակում հավելյալ 499 մլն դրամ, որն իր հերթին նույնպես գերազանցել է երկրորդ եռամսյակի ցուցանիշները 18,5 մլն դրամով:

Ընկերությունը 4-րդ եռամսյակում ևս շարունակել է հավաքագրել նոր մասնագետներ (տես՝ էջ 11) և օպտիմիզացնել առկա բոնուսային համակարգերը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ երրորդ եռամսյակի համեմատ Աշխատակազմի գծով ծախսերը նվազել են ևս 1 տոկոսով:

Առանձնահատուկ ընդգծման արժանի խնայողությունից է նաև ինկասացիոն ծառայությունների նվազումը ավելի գրագետ ինկասացիոն գծերի կառավարման հաշվին՝ հասցնելով միջինում ամսական 44,9 մլն դրամի ծախսը, իջնելով երրորդ եռամսյակի համեմատ 19%-ով:

Մարքեթինգային ծախսերը իրականացվել են թիրախային այնպես, որ թեև նոր տարվա միջոցառումների շրջանակներում իրականացվել է մեծ նախագիծ, չորրորդ եռամսյակում գովազդի և մարքեթինգի վրա ծախսվել է գումարային 133 մլն դրամ, որը 12 տոկոսով ավելի խնայողական է երրորդ եռամսյակի համեմատ:

Եական մեծ աճը նկատվում է այլ ծախսերի մասով՝ ավելին քան 245 մլն դրամ, որի հիմնական մասը պայմանավորված է աշխատակիցների արձակուրդային և այլ պահուստների վերանայմամբ:

Եռամսյակի ընթացքում 9.5%-ով աճել է վարձակալության գծով ծախսը, քանի որ տերմինալային գործունեության ոլորտում աճում է մրցակցությունը և որոշ մասնակիցներ թե՛ գնային ագրեսիվ քաղաքականություն են վարում և թե՛ ավելացնում տերմինալների քանակը՝ ուղղակի և անուղղակի աճեցնելով տվյալ ծախսային հոդվածը:

Հաշվի առնելով վերոնշյալ Եական փոփոխությունները՝ չորրորդ եռամսյակում զուտ եկամուտը կազմել է 153 մլն-ից ավել՝ տարեկան զուտ շահույթը հասցնելով 1 մլրդ դրամի, իսկ չբաշխված շահույթը՝ 2,1 մլրդ դրամի:

Այս հաշվետվության մեջ գնահատականները և համեմատականները արված են առողիտ չանցած հաշվետվությունների հիման վրա, և կիրառված են որոշ ցուցանիշների կլորացումներ, ուստի գումարելիս կարող են հավասար չլինել միասնական ցուցանիշին:

## Ակտիվների և պասիվների վերլուծություն

Ստորև ներկայացված է ակտիվների աղյուսակը  
(ավելի մանրամասն \$ՀՄՍ հաշվետվությունը՝ հաջորդ գլխում)։

Հազար ՀՀ դրամ	30.09.25	31.12.25	Աճ
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	1,383,400	1,350,073	(33,327)
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	2,454,715	2,377,643	(77,072)
<b>Ընդամենը</b>	<b>3,838,115</b>	<b>3,727,716</b>	<b>(110,399)</b>
<b>Ընթացիկ ակտիվներ</b>			
Այլ ընթացիկ ակտիվներ	489,121	533,318	44,197
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,384,548	1,375,089	(9,459)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4,944,549	7,927,968	2,983,419
Օգտագործման սահմանափակումով հաշիվներ	4,548,098	4,003,428	(544,670)
<b>Ընդամենը</b>	<b>11,366,316</b>	<b>13,839,803</b>	<b>2,473,487</b>
<b>Ընդամենն ակտիվներ</b>	<b>15,204,431</b>	<b>17,567,519</b>	<b>2,363,088</b>

Տերմինալային բիզնեսի բնույթից դուրս գալով՝ ղեկավարներ ամսվա վերջում զգալի ազատ դրամական միջոցներ են կուտակվում հաշիվներին, տերմինալներում և կենտրոնական դրամապահոցում: Ընկերությունը 2025 թ.-ի տարեվերջին ունեցել է 7,9 մլրդ դրամական միջոցներ տերմինալներում և ճանապարհին, որը գրեթե նույն մակարդակի շատ է, ինչպես 2024 թ.-ի տարեվերջին: Դեկտ. 31-ին, հաշվետու օրվա դրությամբ Բանկերում ոչ աշխատանքային լինելու պատճառով, մի մասը գումարի մնացել է որպես դրամ ճանապարհին՝ նվազեցնելով չպահանջ հաշվին առկա գումարը: Հաշվի առնելով ամորտիզացիան՝ հիմնական միջոցներում այլ էական փոփոխություններ չեն եղել եռամսյակի ընթացքում:

Ընթացիկ պարտավորություններից տրամադրված կարճաժամկետ փոխառությունները ավելացել են երկարաժամկետ պարտավորությունների նվազելուն հաշվին մոտ 110 մլն դրամով

## Ակտիվների և պասիվների վերլուծություն

Եթե համեմատել դրամական միջոցների տարբերությունը եռամսյակների միջև, ապա կստանանք ակտիվներում գրեթե 3 մլրդ, որը մոտ 390 մլն-ով ավել է, քան կրեդիտորական պարքերի աճը: Գրեթե նույն աշխատած գումարի չափով նվազել է Վարկերի և փոխառությունների գծով պարտավորությունը (ավելին քան 37%)՝ զգալի թեթևացնելով վարկային բեռը:

Բացառելով նաև հարկային պարտավորությունների մասով բնականոն եռամսյակային աճը՝ այլ էական փոփոխություններ չեն եղել:

Ստորև ներկայացված է պարտավորությունների աղյուսակը.


Հազար ՀՀ դրամ	30.09.25	31.12.25	Աճ
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>			
Վարկեր և փոխառություններ	1,068,730	667,276	(401,454)
Վարձակալության գծով պարտավորություն	148,650	148,650	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	114,843	114,843	-
<b>Ընդամենը</b>	<b>1,332,223</b>	<b>930,769</b>	<b>(401,454)</b>
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>			
Վարձակալության գծով պարտավորություն	37,920	23,739	(14,181)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	8,876,837	11,469,953	2,593,116
Ընթացիկ հարկային պարտավորություններ	120,484	174,504	54,020
<b>Ընդամենը</b>	<b>9,035,241</b>	<b>11,668,196</b>	<b>2,632,955</b>
<b>Ընդամենը պարտավորություններ</b>	<b>10,367,464</b>	<b>12,598,965</b>	<b>2,231,501</b>

## Փոփոխություններ սեփական կապիտալում


Չորրորդ եռամսյակի ընթացքում Ընկերությունը կուտակել է ևս 153 մլն-ից ավել զուտ եկամուտ՝ չբաշխված զուտ շահույթը հասցնելով 2,15 մլրդ դրամի: Նախորդ եռամսյակում դիվիդենդի մասնակի տեղաբաշխումներ չի եղել:

Ընկերության ընդհանուր Կապիտալը հասել է 4,97 մլրդ դրամի:

### 2023-25 թթ. չբաշխված շահույթի համեմատությունը, հազ. դրամ



### 30.09.25 թ.-ի դրությամբ կապիտալի բաշխվածությունը



- Չբաշխված շահույթ
- Եմփիտն եկամուտ
- Բաժնետիրական կապիտալ
- Պահուստային կապիտալ
- Չվերահսկվող բաժնեմաս

\* Այս հաշվետվության մեջ գնահատականները և համեմատականները արված են աուդիտ չանցած հաշվետվությունների հիման վրա, և կիրառված են որոշ ցուցանիշների կլորացումներ, ուստի գումարելիս կարող են հավասար չլինել միասնական ցուցանիշին:

# Ռիսկերի բացահայտում

## Բիզնես շարունակականություն

Չափի առնելով Ընկերության գործունեության ոլորտային բնույթը և կապը ֆինանսական շուկայի այլ մասնակիցների հետ՝ Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների անընդհատությունը կախված է ոչ միայն ներքին համակարգերից, այլև արտաքին գործընկերների՝ բանկերի, վճարահաշվարկային օպերատորների, կապի և տեխնոլոգիական մատակարարների հուսալիությունից: Նրանց մոտ առաջացած խափանումները կամ ծառայությունների դադարեցումները կարող են անմիջապես ազդել գործարքների կատարման և հարթակի հասանելիության վրա: Դրանով իսկ առաջանում է արտաքին ռիսկ, որը զսպելու նպատակով Ընկերությունը ձեռնարկում է բավարար միջոցներ, սակայն որոշ դեպքերում ֆինանսական շուկայի կառուցվածքը թույլ չի տալիս ամբողջությամբ կառավարել ռիսկը:

## Փողերի լվացման և համապատասխանության

Չափի առնելով, որ Ընկերության հիմնական ծառայությունները մատուցվում են հաճախորդների հեռակա նույնականացման միջոցով, ուստի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսանսավորման դեմ պայքարի համատեքստում հիմնական ռիսկը շարունակում է մնալ իրական շահառուի և կեղծ նույնականացման ռիսկը (KYC ռիսկեր):

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսանսավորման դեմ պայքարի ներհատուկ ռիսկերը պահանջում են շարունակաբար բարելավվել և ներդնել գործարքների մշտադիտարկման, կասկածելի գործարքների հայտնաբերման և հաճախորդների պատշաճ նույնականացման արդյունավետ ընթացակարգեր:

# Ընկերության ռազմավարությունը առաջին եռամսյակի համար

## Ընկերության հիմնական ռազմավարությունն է.

- Ընկերության շահութաբերության աճ
- Telcell Wallet հավելվածի օգտատերերի քանակի պահպանում և աճ
- Telcell Էկոհամակարգի միջոցով վճարումների ծավալի աճ
- Թիմի աշխատանքի օպտիմալացում և արդյունավետության բարձրացում
- Ծախսերի արդյունավետության բարձրացում

Վերոնշյալ ռազմավարական նպատակներին հասնելու համար 2026 թվականի 1-ին եռամսյակում Ընկերությունը, հաշվի առնելով ակտուալ փոփոխությունները, ընդգծում է զարգացման հետևյալ հիմնական ուղղությունները.

### 1. Բիզնես ուղղվածության գործողություններ

- Տրանսպորտային համակարգի շրջանակներում Telcell Wallet հավելվածի միջոցով օգտագործման նոր, առավել հարմար տարբերակների ներդրումը և դրանց առաջխաղացումը:
- Գործընկեր բանկերի վարկային պրոդուկտների տրամադրման հնարավորության մեկնարկը Telcell Wallet հավելվածի միջոցով:
- Նոր CRM համակարգի գործարկումը:
- Ներդրված Cash Out` բիզնեսի նոր ուղղության ակտիվ զարգացումը և տարածումը:
- Հաճախորդների նույնականացման համակարգի ներդրման գործընթացի ակտիվ գործարկումը, այդ թվում գործընկեր կազմակերպությունների գործիքակազմի կիրառմամբ և այդ հնարավորության տրամադրում բանկերին:
- Տերմինալային ցանցի օպտիմալացում ըստ եկամտաբերության:
- Ծառայությունների մատուցման նոր սակագնային քաղաքականության ներդրումը և կիրառումը

## 2. Նոր նախագծեր և ուղղություններ

- Telcell Wallet հարթակում գործընկեր վարկային կազմակերպությունների և բանկերի համար վարկային պրոդուկտների հարթակի ստեղծում և գործարկում:
- Ընկերության սպասարկման օղակների թվայնացում և Էկոհամակարգային լուծումների ներդրում:
- Միջոցառումների լիարժեք սպասարկման գործիքների ներդրում, բջջային հեռախոսների լիցքավորիչների ցանցի ընդլայնում, լիցքավորիչների նոր նախագծի մեկնարկ:
- Դրամական փոխանցումների շրջանակներում նոր գործիքակազմի ներդրում:
- Visa թվային քարտերի շրջանակներում նոր ծառայությունների ներդրում և առաջմղում:

## 3. Կազմակերպական գործողություններ

- Նախագծերի իրականացման նոր ձևաչափի ` թրայբային մոդելի ներդրումը և մի շարք ռազմավարական նախագծերի համար կիրառումը:
- Աշխատակազմի գնահատման մեխանիզմի ներդրում և նոր մոտիվացիոն համակարգի կիրառում:
- Տեղեկատվական անվտանգության գերժամանակակից համակարգերի ներդրման գործընթացի շարունակություն:

## 4. Մարքեթինգային և դիրքավորման ուղղված գործողություններ

- Նոր CRM համակարգի կիրառմամբ առավել արդյունավետ մարքեթինգային արշավների իրականացում:
- Նոր մարքեթինգային մասշտաբային արշավների իրականացում և մասնակցություն հեղինակավոր միջոցառումներում:
- Ընկերության ընկալման, իմիջի ու դիրքավորման փոխակերպում որպես ունիվերսալ և ճկուն ֆինանսական Էկոհամակարգ:

# ՖՐՄՍ համախմբված հաշվետվություն

## 1. Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	31.12.24	31.12.25
<b>Ակտիվներ</b>		
Հիմնական միջոցներ	1,221,001	1,350,073
Ոչ նյութական ակտիվներ	578,911	724,319
Գուղվիլ	1,157,700	1,157,700
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	201,408	119,499
Կանխավճարներ	81,881	36,440
Տրամադրված փոխառություններ	241,244	241,750
Ջետաձգված հարկային ակտիվներ	85,857	97,935
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>	<b>3,568,002</b>	<b>3,727,716</b>
Պաշարներ	343,947	254,731
Տրամադրված փոխառություններ	45,329	123,261
Ավանդներ բանկում	155,326	155,326
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,446,408	1,375,089
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7,915,646	7,927,968
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	4,337,560	4,003,428
<b>Ընթացիկ ակտիվներ</b>	<b>14,244,216</b>	<b>13,839,803</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>17,812,218</b>	<b>17,567,519</b>

# 1. Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	31.12.24	31.12.25
<b>Կապիտալ և պահուստներ</b>		
Բաժնետիրական կապիտալ	1,212,750	1,220,450
Էմիսիոն եկամուտ	1,405,250	1,405,250
Պահուստային կապիտալ	188,310	181,913
Չբաշխված շահույթ	2,471,789	2,149,051
<b>Ընկերության սեփականատերերին վերագրելի սեփական կապիտալ</b>	<b>5,278,099</b>	<b>4,956,664</b>
Չվերահսկվող բաժնեմաս	11,889	11,889
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>	<b>5,289,988</b>	<b>4,968,553</b>
<b>Պարտավորություններ</b>		
Վարկեր և փոխառություններ	1,290,678	667,276
Վարձակալության գծով պարտավորություն	148,650	148,650
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	162,550	114,843
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>	<b>1,601,878</b>	<b>930,769</b>
Վարձակալության գծով պարտավորություն	84,196	23,739
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10,590,202	11,469,953
Ընթացիկ հարկային պարտավորություններ	245,954	174,504
Ընթացիկ պարտավորություններ	10,920,352	11,668,197
<b>Ընդամենը պարտավորություններ</b>	<b>12,522,230</b>	<b>12,598,966</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>	<b>17,812,218</b>	<b>17,567,519</b>

## 2. Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2024	2025
Հասույթ	10,335,029	10,360,598
Գործակալներին վճարված միջնորդավճարներ	(3,388,524)	(3,581,551)
Այլ եկամուտ	1,586,963	1,496,710
Անձնակազմի ծախսեր	(2,732,208)	(2,782,857)
Վարձակալության գծով ծախսեր	(569,317)	(763,942)
Մաշվածություն և ամորտիզացիա	(413,707)	(462,242)
Թույլտվության վճարներ	(313,536)	(561,239)
Ինկասացիոն ծառայություններ	(457,008)	(629,612)
Գովազդի և մարքեթինգի ծախսեր	(668,286)	(500,119)
Աջակցման և սպասարկման ծախսեր	(154,025)	(167,561)
Բանկային ծառայությունների վճարներ	(511,776)	(411,507)
Պարտքային կորուստների գծով ծախս/ծախսի հակադարձում	(64,421)	(12,621)
Այլ ծախսեր	(754,432)	(1,048,070)
<b>Շահույթ գործառնական գործունեությունից</b>	<b>1,894,752</b>	<b>935,987</b>
Ֆինանսական եկամուտ	444,860	512,878
Ֆինանսական ծախսեր	(289,648)	(111,746)
<b>Զուտ ֆինանսական եկամուտ/ծախս</b>	<b>155,212</b>	<b>401,132</b>
<b>Շահույթ մինչև հարկերը</b>	<b>2,049,964</b>	<b>1,337,119</b>
Շահութահարկի գծով ծախս	(453,322)	(332,447)
<b>Տարվա շահույթ</b>	<b>1,596,642</b>	<b>1,004,672</b>

### 3. Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Պահուստային կապիտալ	Զբաղիված շահույթ	Ընդամենը	Չվերահսկվող բաժնեմաս	Ընդամենը սեփական կապիտալ
<b>2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>1,078,000</b>	<b>-</b>	<b>161,700</b>	<b>2,416,860</b>	<b>3,656,560</b>	<b>11,889</b>	<b>3,668,449</b>
Տարվա շահույթ				1,596,642	1,596,642		1,596,642
<b>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք</b>				<b>1,596,642</b>	<b>1,596,642</b>		<b>1,596,642</b>
Սովորական բաժնետոմսերի թողարկում	134,750	1,405,250			1,540,000		1,540,000
Շահաբաժիններ*				(1,419,000)	(1,419,000)		(1,419,000)
Հատկացում պահուստին			20,213	(20,213)	-		-
Այլ օգտագործումներ				(96,103)	(96,103)		(96,103)
<b>Գործարքներ սեփականատերերի հետ</b>	<b>134,750</b>	<b>1,405,250</b>	<b>20,213</b>	<b>(1,535,316)</b>	<b>24,897</b>	<b>-</b>	<b>24,897</b>
<b>2024 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>1,212,750</b>	<b>1,405,250</b>	<b>181,913</b>	<b>2,478,186</b>	<b>5,278,099</b>	<b>11,889</b>	<b>5,289,988</b>
Տարվա շահույթ				1,004,672	1,004,672		1,004,672
<b>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>1,004,672</b>	<b>1,004,672</b>	<b>-</b>	<b>1,004,672</b>
Սովորական բաժնետոմսերի թողարկում	7,700				7,700		7,700
Շահաբաժիններ*				(1,250,000)	(1,250,000)		(1,250,000)
Հատկացում պահուստին					-		-
Այլ օգտագործումներ				(83,807)	(83,807)		(83,807)
<b>Գործարքներ սեփականատերերի հետ</b>	<b>7,700</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>(1,333,807)</b>	<b>(1,326,107)</b>	<b>-</b>	<b>(1,326,107)</b>
<b>2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>1,220,450</b>	<b>1,405,250</b>	<b>181,913</b>	<b>2,149,051</b>	<b>4,956,664</b>	<b>11,889</b>	<b>4,968,553</b>

## 4. Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2025	2024
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Ստացված միջնորդավճարներ	10,072,538	10,112,095
Վճարված միջնորդավճարներ	(3,642,952)	(3,348,597)
Չուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից	1,360,886	1,495,447
Մուտքեր մատուցված այլ ծառայություններից	582,115	460,269
Ստացված այլ եկամուտ	78,958	50,497
Վճարումներ աշխատակիցներին	(2,772,697)	(2,718,767)
Այլ ծախսեր	(4,215,452)	(3,401,121)
Ստացված տոկոսներ	512,878	444,860
<b>Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները</b>	<b>1,976,274</b>	<b>3,094,683</b>
(Ավելացում)/Նվազում գործառնական ակտիվներում		
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	334,132	1,621,691
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	7,615	(516,609)
Պաշարների փոփոխություն	89,216	(70,977)
Կանխավճարների փոփոխություն	42,637	58,082
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		-
Օպերատորներին վճարվելիք գումարներ	988,941	(1,828,394)
Գործակալների կողմից դեպոնացված միջոցներ	(46,557)	(99,575)
Այլ պարտավորություններ	(64,961)	80,629
<b>Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր մինչև շահութահարկը</b>	<b>3,327,297</b>	<b>2,339,530</b>
Շահութահարկի վճարում	(474,491)	(517,443)
Վճարված տոկոսներ	(45,333)	(129,513)
<b>Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</b>	<b>2,807,473</b>	<b>1,692,574</b>

## 4. Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2025	2024
<b>Ներդրումային գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր</b>		
Մուտքեր հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից	-	18,526
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(654,794)	(655,881)
Ավանդի տեղաբաշխում	-	(162,000)
Ավանդի ելքագրում	-	162,033
Տրամադրված փոխառություններ	(146,405)	(45,288)
Տրամադրված փոխառությունների մարում	-	-
<b>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</b>	<b>(801,199)</b>	<b>(682,610)</b>
<b>Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Վարկերի և փոխառությունների մարում	(1,757,711)	(2,197,024)
Վարձակալության գծով պարտավորությունների դիմաց վճարումներ	(120,448)	(104,295)
Վճարված շահաբաժիններ	(114,013)	(31,019)
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից	-	1,540,000
<b>Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</b>	<b>(1,992,172)</b>	<b>(792,338)</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ</b>	<b>14,103</b>	<b>217,626</b>
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում	7,915,646	7,902,100
Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքներ վրա	(34,355)	(83,399)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	32,574	(120,681)
<b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում</b>	<b>7,927,968</b>	<b>7,915,646</b>

## 2025 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն 2025 թվականի չորրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

Գլխավոր հաշվապահ  
Արթուր Թորոսյան



---

Պատասխանատու ֆինանսական հաշվետվությունների մասով

Գլխավոր տնօրեն  
Արտյոմ Ղազարյան



---

Պատասխանատու ոչ ֆինանսական հաշվետվությունների մասով

16.02.2026թ.



Սույն հաշվետվությունը պարունակում է ապագային ուղղված հայտարարություններ, որոնք վերաբերում են գործառնական ծավալների ու ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ Շնկերության ընթացիկ սպասումներին և կանխատեսումներին: Այս հաշվետվության մեջ մենք ներկայացրել ենք մեր սպասումներն ու կանխատեսումները Շնկերության ապագա գործունեության վերաբերյալ, որոնք ենթակա են հայտնի և անհայտ ռիսկերի, անորոշությունների և այլ գործոնների, ինչի արդյունքում իրական արդյունքները կարող են զգալիորեն տարբերվել կանխատեսվածներից: Այդ գործոնները ներառում են, բայց չեն սահմանափակվում՝ տեխնոլոգիական փոփոխությունները, կարգավորող դաշտի զարգացումները, մրցակցային ճնշումը և սպառողական վարքագծի փոփոխությունները, որոնցից շատերը Շնկերության վերահսկողությունից դուրս են: Ուստի՝ սույն փաստաթղթում ոչինչ չի կարող դիտարկվել որպես շահույթի երաշխիք կամ կանխատեսում: Սույն հաշվետվության մեջ ներկայացված որոշ ֆինանսական տվյալներ հիմնված են Շնկերության ներքին կառավարչական հաշվառման վրա և չեն անցել անկախ աուդիտ:

Չնարավոր են էական տարբերություններ վերջնական աուդիտ անցած տարբերակի հետ: Թվային տվյալները կարող են ենթարկված լինել կլորացման, և, հետևաբար, որոշ աղյուսակներում և գրաֆիկներում ներկայացված հանրագումարները կարող են չհամապատասխանել դրանց բաղադրիչների ճշգրիտ թվաբանական գումարին:

# TELCELL

Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք, 1-ին սեկցիա, 3-րդ հարկ  
info@telcell.am +374 60 272 222 +374 60 272 223  
«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ գործունեությունը վերահսկում է ՀՀ ԿԲ-ն: